ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ընդդեմ «Արարատ» հեռուստաընկերության՝ Իզաբելլա Սարգսյանի եւ Լարա Ահարոնյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Աննա ԻՍՐԱԵԼՅԱՆ
Հայկուհի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին են դիմել քաղաքացի Իզաբելլա Սարգսյանը եւ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ համանախագահ Լարա Ահարոնյանն՝ ընդդեմ «Արարատ» հեռուստաընկերության «Հետհաշվարկ» հաղորդաշարի «Սորոսի հիմնադրամը՝ Հայաստանին սպառնալիք» խորագրով թողարկման, որը եթեր է հեռարձակվել 2017 թվականի սեպտեմբերի 27-ին:

Ըստ բողոքի հեղինակների, հաղորդումը «(...) ի շարս այլ հարցերի, անդրադարձել է նաեւ ընտանեկան բռնությունը կանխարգելող և խտրականությունը արգելող օրենքներին: Այն բանից զատ, որ հաղորդման հյուրը ակնհայտ սուտ տեղեկատվություն է տարածում, ուշագրավ է, որ հաղորդման հեղինակը միանշանակորեն կողմնակալ դիրք է զբաղեցնում՝ ինքն իրեն չտարանջատելով հյուրի տեսակետից: Կարծում ենք, որ հեռուստաընկերությունը կոպտորեն խախտում է լրագրողական էթիկայի և անաչառության սկզբունքները»:

Դիտորդ մարմինը, առաջնորդվելով իր Աշխատակարգի 5.8 կետով («Նախաձեռնության անդամ չհանդիսացող ԶԼՄ-ի կողմից Կանոնագրի խախտման վերաբերյալ բողոքները կարող են քննվել միայն վերջիններիս համաձայնության դեպքում»), 2017 թվականի հոկտեմբերի 9-ին նամակով դիմել է «Արարատ» ալիքի ղեկավարությանը՝ նախ ստանալու նրանց համաձայնությունը, եւ երկրորդ՝ եզրակացության անաչառությունն ապահովելու համար, իմանալու նաեւ խմբագրության դիրքորոշումը: «Արարատ» ալիքի ղեկավարությունը չի արձագանքել: Սույն եզրակացությունը կազմվել է՝ առաջնորդվելով Աշխատակարգի 5.9 կետով, այն է. «Այնուամենայնիվ, հոդված 5-ի 8-րդ կետով նախատեսված՝

համապատասխան ԶԼՄ-ի համաձայնության բացակայության դեպքում ԴՄ-ն իրեն իրավունք է վերապահում արտահայտվել ԶԼՄ-ի կողմից Կանոնագրի խախտման վերաբերյալ՝ այդ մասին տեղեկացնելով վերջինիս»:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. «Արարատ» հեռուստաընկերության «Հետհաշվարկ» հաղորդաշարի 2017թ. սեպտեմբերի 27-ի թողարկման (վարող Արտակ Մուրադյան) հյուրն է եղել «Լույս» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ղեկավար Հայկ Այվազյանը:

- Տվյալ հաղորդումը Յութուբի ալիքում տեղադրված է. «Սորոսի հիմնադրամը՝ Հայաստանին սպառնալիք» խորագրով:

- Բացման խոսքում հաղորդավար Արտակ Մուրադյանն ասում է. «Զրուցելու ենք հասարակական կազմակերպություններից, միջազգային կազմակերպություններից եւ միջազգային ֆոնդերից. ի՞նչ գործունեություն են նրանք ծավալում, արդյո՞ք վտանգ կա այս գործունեության մեջ, ի՞նչ սպառնալիքներ եւ մարտահրավերներ են իրենց մեջ պարունակում Հայաստանի, հայ ժողովրդի եւ առհասարակ մեր արժեհամակարգի հանդեպ, պարզվում է, որ կան եւ դրանք քիչ չեն (...)» (0:17-0:40):

- 2:31-ից, հաղորդման հյուրն ասում է .«Բաց հասարակություններ» հիմնադրամը Հայաստանում զբաղված է (...), երկու ուղղությամբ է իր գործունեությունը, մեկը այլասերումների քարոզն է եւ օրինականացման գործընթացն է (հաղորդավարը արձագանքում է՝ «ըհը» - *ԴՄ)*, նրանց կողմից ֆինանսավորվում են մի շարք կազմակերպություններ, որոնք Հայաստանում զբաղված են համասեռամոլության քարոզով (...): Երկրորդ՝ ֆինանսավորվում են կազմակերպություններ, որոնք մեր երկրի համար ճգնաժամային իրավիճակներում փորձում են ապակայունացնել ներքաղաքական իրավիճակը Հայաստանում, տանել բախումների»: Հաղորդավարը չի առարկում:

- 8:16-ից, հաղորդավարը. «Հաջորդը, ինչ դուք նշել էիք, ավանդական ընտանեկան հիմքերի քայքայումն է, սա՞ ինչ կերպ է իրականացվում, որտե՞ղ է իրականացվում եւ ովքեր են իրականացնում»:

- 16:20-ից, հյուրը. «Ապաստարան տարված երեխաները տրվում են միասեռական զույգերին որդեգրման, օգտագործվում են սեռական շահագործման ցանցում, օգտագործվում են իբրեւ սեռական օրգանների դոնորներ (...)» եւ հետո՝ «Ըստ պաշտոնական տվյալների Գերմանիայում (...) «Յուգենդամտ» ծառայությունը 2011 թվականին ընտանիքներից օտարել է 38

հազար 500 երեխա, իսկ 2016 թվականին՝ այդ թիվը հասել է 84 հազարի»: Հաղորդավարը չի փորձում ճշտել տեղեկությունների աղբյուրները:

- 21:11-ից, հաղորդավարը. «Մյուսը, որ նշում եք որպես վտանգ, որպես մարտահրավեր, որպես սպառնալիք. ներքաղաքական իրավիճակի ապակայունացումն է: Այսինքն, կոնկրետ՝ «Սորոսի հիմնադրամից» սնվող «Բաց հասարակություն Հայաստան» հիմնադրամը սպառնում է ներքաղաքական կայունությանը, ապակայունացնում է իրավիճակը,- ասում է հաղորդավարը, - ճի՞շտ է, ինչպե՞ս (...)»:

- 21:30-ից, զրուցակիցը որպես հարցի պատասխան նշում է. «Անցյալ տարի ՊՊԾ զնդի գրավման ժամանակ «Կանանց ռեսուրսային կենտրոն» կազմակերպության ղեկավար Լարա Ահարոնյանը սկսեց համացանցում տարածել թռուցիկներ, որոնք իրենցից ներկայացնում էին ոստիկանության դեմ գործողություններ իրականացնելու ուղեցույց (...): Մենք հայտնաբերեցինք եւ համեմատեցինք դրանք այն թռուցիկների հետ, որ կիրառվել էին Ուկրաինայում պետական հեղաշրջման ժամանակ (...)»:

2. Ամբողջովին նույն ոգով եւ ուղղվածությամբ է եղել նույն «Հետհաշվարկ» հաղորդաշարի 2017թ. սեպտեմբերի 7-ի թողարկումը, որի հյուրն է եղել «Հանուն ինքնիշխանության վերականգման» նախաձեռնության համակարգող Հայկ Նահապետյանը: Դարձյալ նույն մեղադրանքներն են հնչել «Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության եւ նրա կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների, մասնավորապես Լրագրողների «Ասպարեզ» ակումբի, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հասցեին: Ի դեպ, նույն Հայկ Նահապետյանը հյուր է եղել նաեւ նույն հաղորդաշարի 2017թ. նոյեմբերի 15-ի «Ովքե՞ր էին ուղղորդում ուսանողներին և որտեղի՞ց էր փչում հակապետական քամին» խորագրով թողարկմանը:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք**

Հոդված 4. Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները

1. Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության եւ բազմակարծության սկզբունքների հիման վրա:

II. **«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենք**

Հոդված 49. Լիցենզավորված անձի ընտրությունը

1. Ազգային հանձնաժողովը լիցենզավորված անձի ընտրության ժամանակ հաշվի է առնում՝
(...)
4) բազմակարծությունը խթանելու կարողությունը.
(...)
6) աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը:

III. **Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր**

1.3. հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից:

5.2. որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:

Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն արձանագրում է, որ «Արարատ» ալիքի «Հետհաշվարկ» հաղորդաշարը մեկ անգամ չէ, որ անդրադարձել է միջազգային կառույցների եւ հիմնադրամների, վերջիններիս ֆինանսավորմամբ գործող հասարակական կազմակերպությունների գործունեությանը, սակայն այդ թեմայով հաղորդումներին, որպես կանոն, հյուր է կանչում վերոհիշյալ կազմակերպությունների եւ նրանց գործունեության նկատմամբ բացասական վերաբերմունք ունեցող անձանց: Ընդսմին, այդ հաղորդումների հյուրեր չեն եղել անվանարկված կազմակերպությունների ներկայացուցիչները ու հակառակ կարծիք համապատասխան թեմայով չի հնչեցվել: Այսինքն, խախտվել է բազմակարծության սկզբունքը:

Բողոքարկվող հաղորդման մեջ խախտված են անկողմնակալության եւ անաչառության սկզբունքները. հաղորդավարն, ըստ էության, համաձայնում է այն ամենի հետ, ինչ ասում է հյուրը, որի խոսքերում տարանջատված չեն փաստերն ու կարծիքները, ավելին՝ սեփական կարծիքը ներկայացված է իբրեւ անհերքելի փաստ:

Խախտված է հավաստիության սկզբունքը. հյուրը ներկայացնում է

կասկածելի տվյալներ այլ երկրներից (օրինակ՝ «Ապաստարան տարված երեխաները տրվում են միասեռական զույգերին որդեգրման» եւ այլն, *տես «Փաստեր» բաժնում*), իսկ հաղորդավարը չի պահանջում նշել տեղեկությունների աղբյուրները: Նույն սկզբունքը խախտված է նաեւ դիմումատու Լարա Ահարոնյանի վերաբերյալ պնդումները («Անցյալ տարի ՊՊԾ գնդի գրավման ժամանակ «Կանանց ռեսուրսային կենտրոն» կազմակերպության ղեկավար Լարա Ահարոնյանը սկսեց համացանցում տարածել թռուցիկներ, որոնք իրենցից ներկայացնում էին ոստիկանության դեմ գործողություններ իրականացնելու ուղեցույց (...)» եւ այլն, *տես «Փաստեր» բաժնում*) ներկայացնելիս: Զրույցը վարողը որպես ճշմարտություն է ընդունում ասվածը:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը արձանագրում է, որ տվյալ հաղորդումը նաեւ ընդդեմ հասարակական կազմակերպությունների քարոզչական տարրեր ուներ. Յութուբում տեղադրված թողարկման խորագրի՝ «Սորոսի հիմնադրամը՝ Հայաստանին սպառնալիք» ձևակերպումից տպավորություն է ստեղծվում, որ հաղորդումը ոչ թե ճշմարտությունը վեր հանելու, բազմակողմանի քննարկում ծավալելու, այլ հասարակական կազմակերպություններին վարկաբեկելու, նրանց մասին բացասական հանրային կարծիք ձեւավորելու միտում ուներ: Դիտորդ մարմինը նման գործելակերպն անթույլատրելի է համարում:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը կոչ է անում «Արարատ» ալիքի ղեկավարությանը՝

- առաջնորդվել բազմակարծության, անաչառության, անկողմնակալության սկզբունքներով,

- իրականացնել հեռուստահեռարձակման լիցենզավորման մրցույթների ժամանակ ստանձնած՝ բազմակարծությունը խթանելու պարտավորությունը եւ նման թեմաներով հաղորդումների հրավիրել նաեւ հակառակ կարծիք ունեցողներին,

- պահպանել հավաստիության սկզբունքը. կասկածելի տվյալներ ներկայացնող զրուցակիցներից անպայման ճշտել տեղեկությունների իրական լինելը հավաստող կոնկրետ աղբյուրները,

- ձգտել, որ հաղորդումներում ներկայացվող փաստերը տարանջատված լինեն կարծիքներից եւ մեկնաբանություններից, եւ ներկայացվող կարծիքներն ու անհիմն դատողությունները չհնչեն որպես անհերքելի փաստեր:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի նիստում,
Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով՝

Մեսրոպ Հարությունյան, մամուլի փորձագետ

Աշոտ Մելիքյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել Նալբանդյան, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Արա Շիրինյան, «Շողակաթ» հեռուստաընկերության գեղարվեստական ղեկավար

Նունե Սարգսյան, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Գեղամ Վարդանյան, Media.am-ի պրոդյուսեր

Կարինե Քալանթարյան, Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի դասախոս

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: